32. Ներքին ժամատան հս աե ոոմնայան կամարի վրա Ամենափրկիչ եկեղեցու մուտքի հս կողմը

(Լուս. № 38)

Մ 1181

Հրատարակված է Ջալ 17



Նկ. 38. Արձ. № 32:

1 *Աճածնին աւետեց*
2 *տաւնն ամենայն ե-*
3 *կեղեցիքս ժամհաւրն*
4 *է, շինողի գաւթիս ան-*
5 *խափան։ Եւ որ խափան-*
6 *է, դատի ի տէ Այ. ամէն։*

Ծանոթություն.— *Ժամհայրը ոքանչելի ժամատունը շինող գլխավոր վարպետի անձնանունն է։ Արձանագրության ժամանակը որոշել ենք ժամատան շինության թվականով։*

Ժամհայր անձնանունը Անձ ունի միայն Հախում գյուղի մոտ գտնվող Շխմուրատա վանքի մի անթվական խաչքարի արձանագրությունից, որ մեջ է բերել Բարխուդարյանցի «Արցախ»-ի 335 էջից. «Յանուն Աստուծոյ ես Դանիել և Այլարայ միաբանեցաք վանքս և տուաք յայտնութեամբ Ժամհերայ տղին...»։ Մենք, 1935 թվականին այնտեղ լինելով, այդ խաչքարը չտեսանք։ Մի այլ խաչքարի վրա, որ Բարխուդարյանցը չի հիշատակում, կա եղծված մի արձանագրություն՝ «Սբ խաչին Ա. ժամ հաւր...», շարունակությունն անվերծանելի է։ Սակայն այստեղ, պետք է ենթադրել, որ սուրբ խաչի մեկ ժամը հատկացված է եղել ճայր. . .-ին, որի անունը եղծված է։

Տարընթերցում.— ժամճայրն Ջալ *կարդացել է* ժամ առնեն:

33. Մեծ զավթի մեջ, փոքր զավթի մուտքի ամ կողքին

(Լուս. № 39)

Հ ՈԿԶ Մ 1217

Հրատարակված է՝ Ջալ 20, Դրիմ 57, Վիմ 60

1 *Ի թուի(ն) հայոց ՈԿԶ*
2 *ես՝ Գրիգոր վարդապետ, որդի Աբասայ, առաջնորդ սբ ուխտիս, ետու*
3 *յԱծածինս խաչ մի մեծ, ԺԳ գիրք։ Գրեցաւ ինձ սրբոյն Բարսղի տաւ-նին ամէն*
4 *եկեղեցիքս մինչ ի կատարած աշխարհի։ Որք յաւժար կամաւք կատար-*
5 *են գինդիրս իմ աւրհնին յԱյ, իսկ թէ ոք խափանել ջանայ՝ նզովս*
6 *առցէ յԱյ և յամենայն սրբոց։ Ետու և այլ արդիւնք։*